

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/07-2**

ք. Երևան

« 02 » փետրվար. 2021թ.

Հանրապետության նախագահի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Խ. Պողոսյանի, որը գործում է Հանրապետության նախագահի աշխատակազմի կանոնադրության և Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի 20.01.2021թ.-ի Հ-12-Լ հրամանի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարիագառ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ



3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ոչ ավել, քան 1300000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

Պայմանագրի N 1 հավելվածի գնացուցակում նշված են ՄԳ/ՆԳxԾ բանաձևով հաշվարկված գները:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Հանրապետության նախագահի աշխատակազմ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505

/ Ի. Պողոսյան /
Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Կարիագառ» ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 29/25
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480100076100000
ՀՎՀՀ 01001431

/ Հ. Կարապետյան /
Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ղ դրամ

Ծառայության							
Չափա-բաժնի համարը	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/«Ղ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
2	50111130/502	Հոնդա ՍիԱր-Վի 2.4 (2012թ.) HONDA CR-V ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	600000	1	Բ.Երևան, Կատարողի տեխնիկական սպասարկման կայանում	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրվանից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:
6	50111130/506	Նիսսան Տիդա 1.6 (2008թ.) NISSAN TIIDA ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	700000	1		

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները/տեսակները/ և նույնացման համարները՝ ըստ չափաբաժինների	
		2-րդ չափաբաժին	6-րդ չափաբաժին
		Հոնդա ՍիԱր-Վի 2.4 (2012թ.) HONDA CR-V	Նիսսան Տիդա 1.6 (2008թ.) NISSAN TIIDA
		5J6RM4850DL700988	JNICC11DX9T000324 JNICC11D79T000281 JNICC11D99T000458
1	2	3	4
		Մեկ միավորի համար նախատեսված առավելագույն գներ -գնացուցակ /ՀՀ դրամ/	
1	Բռնկման համակարգի ստուգում	1015.137	724.1374
2	Կցորդման համակարգի ստուգում	1015.137	724.1374
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1015.137	724.1374
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1015.137	724.1374
5	Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում	1015.137	724.1374
6	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1015.137	724.1374
	1.Շարժիչ		
7	Շարժիչի հանում և տեղադրում	33837.9	24137.91
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	148886.8	89310.28
9	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	27070.32	19310.33
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	20302.74	14482.75
11	Շարժիչի գլխիկի փականի փոխարինում հղկումով և խտաբուկերով	6090.822	4344.825
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	2030.274	1448.275
13	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	2030.274	1448.275
14	Փականների խցուկների փոխարինում	2030.274	1448.275
15	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	2030.274	1448.275
16	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	64292.01	43448.25
17	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	30454.11	21724.12
19	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	6767.58	4827.583
20	Ծնկաձև լիսեռի ուղղում	6767.58	4827.583
21	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	13535.16	7241.374
22	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	13535.16	7241.374
23	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	16918.95	12068.96
24	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	6767.58	4827.583
25	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	13535.16	7241.374
26	Փոկանիվի փոխարինում	6767.58	4827.583

28	Շարժիչի շղթայի փոխարինում	60908.22	43448.25
29	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	13535.16	9655.166
30	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	10151.37	7241.374
31	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	4060.548	2896.55
32	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	676.758	482.7583
33	Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում	10151.37	5793.099
34	Յուղի ծորակի փոխարինում	1353.516	965.5166
35	Օդաքաշակ փողրակի փոխարինում	2707.032	1931.033
37	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	3383.79	2413.791
38	Շարժիչի կափույրի փոխարինում	18272.47	12068.96
39	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	18272.47	12068.96
40	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	10828.13	6758.616
42	Ատամնանիվի փոխարինում	676.758	482.7583
43	Սովաարիկ փոխարինում 1կ/տ	676.758	482.7583
44	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	16918.95	10620.68
45	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	12181.64	7241.374
46	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	9474.612	5793.099
47	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	12181.64	7724.133
48	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	12181.64	6758.616
49	Գլխիկի հեղույսի փոխարինում	2368.653	1689.654
50	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	1015.137	724.1374
51	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	18949.22	12068.96
52	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	14888.68	8689.649
53	Շարժիչի քիմիական լվացում 1 կտորը	2707.032	1931.033
54	Կափույրի բնիկի նորոգում /գնեզդր/	1353.516	965.5166
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
55	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1015.137	724.1374
56	Ավտոմեքենայի հանգույցների յուղում	3383.79	
57	Համակարգչային ախտորոշում	3383.79	2413.791
58	Յուղի ռադիատորի փոխարինում	6767.58	4827.583
59	Յուղի ռադիատորի նորոգում	676.758	482.7583
60	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	6767.58	4827.583
61	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	6767.58	4827.583
62	Վառոցքի մոմի փոխարինում 1 հատ	338.379	241.3791
63	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	6767.58	4827.583
64	Օդի զտիչի փոխարինում	676.758	482.7583
65	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1353.516	965.5166
66	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	676.758	482.7583
67	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	8121.096	4827.583
68	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	10828.13	6758.616
69	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	16242.19	10620.68
70	Բոցամուղի կողավորում	676.758	482.7583
71	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	676.758	482.7583
72	Բենզամղիչի փոխարինում	8121.096	5793.099
74	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1353.516	965.5166
76	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5414.064	3862.066
77	Ղեկավարման բլոկի վերանորոգում	13535.16	9655.166

78	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	13535.16	9655.166
79	Վառելիքի բաքի մաքրում	2030.274	1448.275
80	Օդի ծախսի տվիչի փոխարինում	11504.89	8206.891
81	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	10151.37	7241.374
82	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	8121.096	4827.583
83	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	3383.79	2413.791
84	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	3383.79	2413.791
85	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	8121.096	5793.099
86	Տվիչի փոխարինում	6767.58	4827.583
87	Ակսիլատորի փոխարինում կամ նորոգում	3383.79	2413.791
88	Օդազտիչի իրանի փոխարինում	1353.516	965.5166
89	Էլ.բենզոմղիչի կախոցի փոխարինում	676.758	482.7583
3. Սառեցման և արտաձման համակարգ			
90	Հովհարի փոխարինում	16242.19	10620.68
91	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	9474.612	5793.099
92	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	14888.68	9655.166
93	Ռադիատորի նորոգում	29100.6	19310.33
96	Ընդարձակող բաքի փոխարինում	1353.516	965.5166
97	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1353.516	965.5166
98	Ջրի ծորակի փոխարինում	2707.032	1931.033
99	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	1353.516	965.5166
100	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3383.79	2413.791
101	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	47373.06	33793.08
102	Վառարանի ռադիատորի նորոգում	676.758	482.7583
103	Վառարանի շարժիչի փոխարինում	10151.37	7241.374
104	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	4060.548	2896.55
105	Ջեռուցիչի իրանի փոխարինում	3383.79	2413.791
106	Թերմոստատի փոխարինում	8121.096	5793.099
107	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	12181.64	7724.133
108	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	12181.64	7724.133
109	Գեներատորի փոկի փոխարինում	2707.032	1931.033
110	Գեներատորի փոկի ձգող հողովակի փոխարինում	4060.548	2896.55
111	Ջրի ռադիատորի վերանորոգում	29100.6	19310.33
112	Թերմոստատի միջադիրի փոխարինում	10151.37	6758.616
114	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	6767.58	4827.583
115	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	1015.137	724.1374
116	Խլարարի ներդիրի փոխարինում	2707.032	1931.033
117	Խլարարի կախոցի փոխարինում	3383.79	2413.791
118	Հովացման հեղուկի փոխարինում	4060.548	2896.55
119	Դիֆուզորի փոխարինում	4060.548	2896.55
120	Կոնդիցիոների լիցքավորում	6767.58	4827.583
122	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում	12181.64	7724.133
123	Կոնդիցիոների ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	4060.548	2896.55
124	Կոնդիցիոների առանցքակալի հանում և տեղադրում	4060.548	2896.55
125	Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում	14211.92	9655.166
126	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում	6767.58	3862.066
4. Փոխանցման տուփ			
127	Փոխանցման տուփի յուղի զտիչի փոխարինում	9474.612	6758.616
128	Փոխանցման տուփի յուղի փոխարինում	13535.16	8689.649
5. Բաշխիչ տուփ			

129	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	236865.3	
130	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	47373.06	
131	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	101513.7	
132	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	33837.9	
133	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	33837.9	
134	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	23686.53	
135	Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում	23686.53	
136	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	21656.26	
137	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	14888.68	
138	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	13535.16	
139	Բաշխիչ տուփի երկժանի փոխարինում	13535.16	
140	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	16918.95	
141	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	16918.95	
142	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	20302.74	
143	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	33837.9	
144	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	16918.95	
145	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	14888.68	
146	Տվիչի փոխարինում	3383.79	
147	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	16918.95	
148	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	16918.95	
149	Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում	33837.9	
6. Առջևի և հետևի կամրջակներ			
150	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	30454.11	
151	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	16918.95	
152	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	6767.58	
153	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	5414.064	
154	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	7444.338	
155	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	37221.69	
156	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	13535.16	
157	Կամրջակի տվիչի փոխարինում	676.758	
158	Առջևի կիսաստնիները միացնող հանգույցի փոխարինում	13535.16	9655.166
7. Կախոց			
159	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	10151.37	6275.858
160	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	12181.64	7241.374
161	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	13535.16	8689.649
162	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	13535.16	8689.649
163	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	12181.64	8689.649
164	Անվակունդի գամասեղի և հեղյուսի փոխարինում (մեկ անիվի համար)	5075.685	3620.687
165	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	3045.411	2172.412
166	Ձախ կամ աջ հողակապի նորոգում	10151.37	7241.374

167	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոցի փոխարինում	8121.096	5793.099
168	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	10151.37	7241.374
169	Առջևի զսպանակի փոխարինում	9474.612	6758.616
170	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	9474.612	6758.616
171	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	3383.79	2413.791
172	Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում	5414.064	3862.066
173	Մեղմիչի երկաթե համաձուլվածքով վռանի փոխարինում	5414.064	3862.066
174	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10151.37	7241.374
175	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	4398.927	3137.929
176	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	3045.411	2172.412
177	Հարվածիչի (բարձիկի) փոխարինում	10151.37	7241.374
178	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	8121.096	3862.066
179	Գնդե հողակապերի փոխարինում	8121.096	3862.066
180	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	6767.58	4827.583
181	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4060.548	2896.55
182	Հետևի կախոցի անվաքացքի կարգավորում	5414.064	3862.066
183	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	3045.411	482.7583
184	Կայունարարի կալունակի փոխարինում	4060.548	2896.55
185	Հետևի զսպանակների փոխարինում	9474.612	6758.616
186	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	6767.58	4827.583
187	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2707.032	1931.033
188	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	10151.37	7241.374
189	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1հատ	3045.411	2172.412
190	Անվակունդի դարձովի կանգնակի փոխարինում	5752.443	4103.445
191	Աջ կամ ձախ դարձկեն լծակի փոխարինում	5752.443	4103.445
8. Ղեկային մեխանիզմ			
192	Ղեկասյունակի հիմնական նորոգում,	50756.85	36206.87
193	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	6767.58	4827.583
194	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	3383.79	2413.791
195	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	8121.096	5793.099
196	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	5414.064	3862.066
197	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	13535.16	9655.166
198	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5075.685	3620.687
199	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	9474.612	6758.616
200	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	9474.612	6758.616
201	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	5414.064	3862.066
202	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	3383.79	2413.791
203	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	6767.58	4827.583
204	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	2030.274	1448.275
205	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	3045.411	2172.412
206	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	5752.443	4103.445
207	ՂԿ ձողի տեղաշարժի մեխանիզմի փոխարինում	4398.927	3137.929
208	Հիդրոուժեղարարի յուղի տարայի փոխարինում	2707.032	1931.033
9. Արգելակային համակարգ			
209	Վակունային ուժեղարարի փոխարինում	23686.53	15448.27
210	Վակունային ուժեղարարի փականի փոխարինում	4060.548	2896.55
211	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10151.37	6758.616

212	Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	8797.854	6275.858
213	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8121.096	5793.099
214	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	5414.064	3862.066
215	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	9474.612	5793.099
216	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	9474.612	5793.099
